ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Երևան, Կառավարական տուն 3

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ
(ծածկագիր՝ 3.1-428)

1. Բաժնի առաջատար մասնագետի համար հասանելի են Երևանի քաղաքապետարանի գործունեության վերաբերյալ ամբողջ, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի, և բոլոր գրառումները, այդ թվում՝ էլեկտրոնային, որոնք անհրաժեշտ են աուդիտի իրականացման համար:

2. Բաժնի առաջատար մասնագետն իրավունք ունի՝

ա) աջակցություն ստանալու այն միավորների ղեկավարներից և աշխատակիցներից, որտեղ իրականացվում է աուդիտը.

բ) պատասխանատու աշխատակիցներից պահանջելու աուդիտի համար անհրաժեշտ որևէ տվյալ:

գ) բաժնի պետին զեկուցել աուդիտի իրականացման խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ.

դ) առաջարկում է բաժնի պետին՝ փորձագետ նշանակել, եթե ներքին աուդիտի իրականացման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ ու հմտություններ.

ե) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

3. Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) բաժնի պետի հանձնարարությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում, քաղաքային ենթակայության կազմակերպություններում իրականացնում է գործունեության աուդիտ.

բ) հետևում է ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտորների վարքագծի կանոններին, ներքին աուդիտի կանոնակարգին և լիազոր մարմնի հաստատած ներքին աուդիտի մեթոդաբանությանը.

գ) չի հրապարակում և չի տրամադրում գործունեության ընթացքում կամ արդյունքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

դ) գիտակցաբար չի մասնակցում անօրինական գործողությունների և չի կատարում աշխատանքներ, որոնք վարկաբեկում են ներքին աուդիտորի մասնագիտությունը և Երևանի քաղաքապետարանը:

ե) օժանդակում է բաժնի պետին ներքին աուդիտի կանոնակարգի նախագծի, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի մշակմանը.

զ) իրականացնում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը.

է) բաժնի առաջատար մասնագետը հաշվետու է բաժնի պետին ու ներկայացնում է հաշվետվություններ, այդ թվում՝

- աուդիտի արդյունքների և արձանագրված խնդիրների, արված առաջարկությունների և կազմակերպությունների գործունեությունը բարելավելու նպատակով ձեռնարկված գործողությունների մասին.

- ներքին աուդիտի տարեկան գործունեության ծրագրի իրականացման մասին.

- իր առջև ծառացած սահմանափակումների բոլոր դեպքերի մասին:

ը) աուդիտի ընթացքում բացահայտված կեղծիքի նշանների մասին տեղեկացնում է բաժնի պետին:

թ) բացի ներքին աուդիտին առնչվող աշխատանքներից, Երևանի քաղաքապետարանում այլ գործառույթներ և աշխատանքներ իրականացնելու իրավունք չունի:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) ունի միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի.

բ) ունի ներքին աուդիտորի որակավորում և հաշվառված (գրանցված) է 2013թ. հունվարի 1-ից լիազոր մարմնի կողմից վարվող՝ «Ներքին աուդիտի մասինե օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված, ցանկում:

Ներքին աուդիտորի որակավորում չունեցող անձը «Ներքին աուդիտի մասինե օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 23.02.2012թ. հ.165-Ն հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետի համաձայն տվյալ պաշտոնը կարող է զբաղեցնել միայն ժամկետային աշխատանքային պայմանագրով՝ ուսուցանվող աուդիտորի կարգավիճակով, մինչև համապատասխան որակավորում ստանալը և «Ներքին աուդիտի մասինե օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելը:

գ) ունի Հարկային օրենսգրքի, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասինե, «Տեղական ինքնակառավարման մասինե, «Հանրային ծառայության մասինե, «Համայնքային ծառայության մասինե, «Ներքին աուդիտի մասինե, «Գանձապետական համակարգի մասինե, «Հաշվապահական հաշվառման մասինե, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասինե, «Կուտակային կենսաթոշակի մասինե, «Գնումների մասինե, «Բաժնետիրական ընկերությունների մասինե, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասինե օրենքների, աշխատակազմի և բաժնի կանոնադրության ու իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

դ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

ե) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքերիի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնները մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2024 թվականի հունվարի 22-ը ժամը 10:00:

Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարողեն դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010-515131):

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
աշխատակազմ